ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
(XIX դ. 70-ական թվականներ)

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թանզիմաթի շրջանի բարեփոխումները, թեև կոչված էին արդիականացնելու թուրքական ավատական-թեոկրատիկ միապետության բնույթը, այդուհանդերձ, չէին կարող կանխել Օսմանյան Թուրքիայի քաղաքական քայքայումը:

Թուրքիայի տնտեսական զարգացման մակարդակը Արևմուտքի երկրների համեմատությամբ նույնպես անմխիթար էր:

XIX դ. 60–70-ական թվականներին Օսմանյան Թուրքիան հետամնաց գյուղատնտեսական երկիր էր: Գյուղատնտեսության զարգացման առաջընթացին խոչընդոտում էին ավատական-սուլթանական պետական վարչակարգը և երկրի ֆինանսատնտեսական հպատակեցումը օտարերկրյա կապիտալին: Երկրի տնտեսական ծանր դրությանը համապատասխանում էր նրա քաղաքական վիճակը: Աճում էր ժողովրդի լայն զանգվածների դժգոհությունը կառավարության նկատմամբ, և կայսրության տարածքում ապրող բոլոր թուրքահպատակ ժողովուրդները ձգտում էին ազատվել անկարող իշխանությունից: Երկրի սոցիալ-տնտեսական վիճակը վայրընթաց ապրեց Ղրիմի պատերազմից հետո, երբ Թուրքիան ֆինանսական, անխուսափելիորեն՝ նաև քաղաքական կախման մեջ ընկավ եվրոպական տերություններից, և XIX դ. 60-ական թվականներին երկրին սպառնում էր եվրոպական մեծ տերությունների կիսագաղութը դառնալու ուրվականը:

Այս գործընթացի հետևանքն էր ժողովրդական լայն զանգվածների ազգային և կրոնական իրավազրկությունը, ինչպես նաև տնտեսական կացության վատթարացումը, որը XIX դ. 60-ական թվականներին հանգեցրեց Ռումինիայում, Սերբիայում, Բոսնիայում և Հերցոգովինայում, Բուլղարիայում և Կրետե կղզում թուրքական գերիշխանության դեմ ազատագրական շարժման նոր ալիքի, իսկ 1862 թ. ընդվզեցին Զեյթունի լեռնականները: Այս ամենը վկայում էր Օսմանյան կայսրության քաղաքական խոր ճգնաժամի, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Բալկաններում միջազգային նոր բարդությունների մասին:

Դաժանորեն ճնշվող այս ապստամբություններն ավելի թուլացրեցին կայսրության պետական կառույցի հիմքերը: Այս շրջանում Օսմանյան կայսրության դրությունը բնութագրվում էր ներքին և, ամենից առաջ, ազգային հակասությունների աճով: Սակայն Օսմանյան կայսրությանը սպառնում էր ոչ միայն քաղաքական, այլև տարածքային քայքայում, քանզի թուրքահպատակ ճնշված ժողովուրդները ձգտում էին ազատագրվել թուրքական գերիշխանությունից: Քաղաքական այս ծանր իրավիճակում սրվեց մեծ տերությունների պայքարը «օսման-

յան ժառանգության» համար: XIX դ. 60-ական թվականներին էլ ավելի թուլացան Թուրքիայի քաղաքական դիրքերը Եգիպտոսում, որտեղ արդեն տիրում էին Անգլիան և Ֆրանսիան, թուլացավ նաև թուրքական գերիշխանությունը Սիրիայում, Լիբանանում, Արաբական թերակղզում և օսմանյան մի շարք այլ նահանգներում:

Օսմանյան կայսրության ճակատագիրը տագնապ էր առաջացնում թուրքական ղեկավար շրջաններում, որոնք կայսրության հոգեվարքը կասեցնող տարբեր, երբեմն՝ իրարամերժ տարբերակներ էին առաջարկում: Քաղաքական որոշ ուժեր ապավինում էին բարենորոգումների բուժիչ միջամտությանը՝ որդեգրելով թուրքական պաշտոնական քաղաքականությունը: Իսկ նրանց հակառակորդները կարծում էին, որ այդ միջոցները անբավարար են. ընդունելով բարեփոխումների օգտակարությունը՝ վերջիններս դրանք համարում էին ոչ արդյունավետ:

Այնուամենայնիվ, այս բոլոր խոչընդոտների առկայության պայմաններում երկրում աստիճանաբար զարգանում էին արտադրական նոր հարաբերություններ, որոնք որոշակիորեն խթանեցին թանզիմաթի բարեփոխումները: Իսկ վերջինների շնորհիվ ձևավորվեց վարչահիրավական այնպիսի համակարգ, որը կոչված էր ապահովելու հպատակների կյանքի և ունեցվածքի անձեռնմխելիությունը: Այս ամենը, իր հերթին, ձևավորեց օսմանյան ազգային բուրժուազիան, որի շահերի արտահայտիչը դարձավ երիտասարդ թուրք մտավորականությունը, որը «ծագումով ավատական-բյուրոկրատական էր, սակայն՝ բուրժուական մտայնություններով: Հենց մտավորականության շրջաններում առաջին անգամ առաջացան և ձևավորվեցին Օսմանյան կայսրությունը սահմանադրական միապետության վերածելու գաղափարները՝ որպես երկրի սոցիալ-քաղաքական և կուլտուրական առաջընթացի միջոց»[1]:

Թուրք մտավորականության շրջաններում աստիճանաբար ձևավորվեց հանուն երկրի անկախության պայքարի գաղափարը, որը պետք է նպաստեր կայսրության տնտեսական և մշակութային զարգացմանը: Դրա արտահայտիչն էր «նոր օսմանների» շարժումը, որը, ինչպես նշվեց, մեծ դեր խաղաց XIX դ. 60-70-ական թվականներին հանուն օսմանյան սահմանադրության մղվող պայքարում: Սահմանադրական շարժումը սկիզբ առավ XIX դ. 60-ական թվականներին և կարևոր դեր խաղաց Օսմանյան Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում մինչև թուրքական խորհրդարանի լուծարումը (1878): «Սահմանադրական շարժման ելակետը» դարձավ 1865 թ. ամռանը Ստամբուլում ստեղծված գաղտնի միությունը, որը Թուրքիայի պատմության մեջ հայտնի դարձավ «Նոր օսմանների միություն» անվամբ: Միության ղեկավարներն ու գաղափարակիրներն էին գրական գործիչներ և հրապարակախոսներ Նամըք Քեմալը, Զիյա բեյը և Ալի Սուավին: Միության շարքերում կային նաև քաղաքական և ռազմական խոշոր գործիչներ, որոնց թվին էր պատկանում Ահմեդ Միդհատ փաշան:

---

[1] М. А. Г а с р а т я н, С. Ф. О р е ш к о в а, Ю. А. П е т р о с я н. Очерки истории Турции. М., 1983, с. 125.

«Նոր օսմանների» շարժումը, լինելով ավատական-բյուրոկրատական խավերի շարժում, այնուամենայնիվ, արտահայտում էր Թուրքիայի բուրժուական զարգացման, ինչպես նաև ծնունդ առնող թուրքական ազգային բուրժուազիայի շահերը[2]: Սակայն սկզբնական շրջանում «նոր օսմանները» դեռ այնքան հստակ չէին պատկերացնում կայսրության զարգացման հետագա հեռանկարները, միասնական չէին նաև ապագա բարեփոխումների հարցում. «Նոր օսմանները միասնական էին նրանում, ինչ չէին ցանկանում, այլ ոչ թե նրանում, ինչ ցանկանում էին», նշում է թուրք հետազոտող Քյունթայը[3]:

Սկզբնական շրջանում միության անդամները միջոցներ էին փնտրում՝ տնտեսական առաջընթացը խթանելու ուղղությամբ: Նրանք դժգոհ էին Ալի փաշայի քաղաքական գծից: «Նոր օսմանները» պայքարում էին երկրի առաջընթացին խոչընդոտող ավատական միահեծանության դեմ՝ պահանջելով արմատախիլ անել Թուրքիայում տիրող վարչական կամայականությունը, բարելավել կառավարման և կրթության ոլորտները, քանի որ միայն լուսավորությունը և կրթությունը կարող էին փրկել երկիրը միջնադարյան ավատատիրական խավարից: Նրանք ձգտում էին Թուրքիայի տնտեսական և քաղաքական անկախությանը, որն անհնար էր իրագործել առանց կրթության և քաղաքակրթության զարգացման, ուստի նրանց ձգտումներն առաջադեմ էին: 1867 թվականից «նոր օսմանները» արդեն գործում էին վտարանդության մեջ:

Եվրոպայում նրանք շարունակում էին տարածել իրենց գաղափարները: Այստեղ հրատարակում էին մի շարք թերթեր, որոնց միջոցով քարոզում էին իրենց ընդդիմադիր հայացքները: Սուր քաղաքական ուղղվածությամբ աչքի էր ընկնում «Հյուրիեթ» (Ազատություն) թերթը, որը 1869-1870 թթ. Ժնևում հիմնեցին «նոր օսմանների» չափավոր թևի ներկայացուցիչ Զիյա բեյը և Նամըք Քեմալը: «Հյուրիեթը» խիստ քննադատում էր Բ. Դռանը՝ պահանջելով օրենսդրորեն սահմանափակել սուլթանի իրավունքները: Թերթը առաջ էր քաշում օրենսդիր և գործադիր իշխանության առանձնացման գաղափարը՝ առաջարկելով, որ երեսփոխանների պալատը՝ որպես բարձրագույն իշխանության մարմին, հիմնվի ընտրական սկզբունքների վրա և այլն[4]:

---

[2] Ю. А. П е т р о с я н. “Новые османы” и борьба за Конституцию 1876 г. в Турции. М., 1958, с. 70.

[3] Ю. А. П е т р о с я н. Младотурецкое движение (вторая половина XIX – начало XX в.). М., 1971, с. 63-64. *Այդ շարժման «ինտելեկտուալ ավանդույթների» հիմնադիրն էր Իբրահիմ Շինասին, որին Ն. Քեմալը համարում էր «նոր օսմանների» հոգևոր ուսուցիչը* (*նույն տեղում, էջ 45*): *Իբրահիմ Շինասին համարվում է Օսմանյան կայսրության եվրոպականացման առաջին քարոզիչը: Այս գործիչները խմբվել էին Շինասիի «Թասվիր-ի էֆքյար» և Ալի Սուավիի «Մուհբիր» պարբերականների շուրջ, որոնց էջերում կտրուկ քննադատվեցին օսմանյան իշխանությունները՝ Կրետեի ապստամբների հանդեպ վճռականորեն չգործելու համար: Պատասխան բռնություններից խուսափելով՝ արտասահման անցան Նամըք Քեմալը և Ալի Սուավին: Այս միջոցներին էր, որ մեծ վեզիր Ալի փաշան հրապարակեց 1867 թ. Ժամանակավոր որոշումը, որը իշխանություններին հնարավորություն էր տալիս բռնություններ գործադրել ըմբոստ մամուլի դեմ* (Ю. А. П е т р о с я н. “Новые османы”…, с. 41–42):

[4] М. А. Г а с р а т я н, С. Ф. О р е ш к о в а, Ю. А. П е т р о с я н. *Նշվ. աշխ., էջ* 126:

1860-ական թվականների սկզբից թուրքական քաղաքական հրապարակախոսության զարգացումը հզոր ազդակ ստացավ առաջին մասնավոր թուրքական թերթերի՝ «Թերջյուման-ի ահվալ» (Իրադարձությունների մեկնաբան), «Թասվիր-ի էֆքյար» (Կարծիքների անդրադարձ), «Մուհբիր» (Թղթակից), հատկապես վտարանդի «նոր օսմանների» ազատ մամուլի ստեղծումով՝ «Հյուրիեթ» և «Մուհբիր» թերթերի շնորհիվ»[5]:

Եվրոպական պառլամենտարիզմի գաղափարները «նոր օսմանները» լծորդում էին դուրանի և շարիաթի դոգմաներին:

«Հյուրիեթը» նույնպես մեծարում էր դուրանը և շարիաթը, սակայն նրա հրապարակախոսական պաթոսը ուներ աշխարհիկ ուղղվածություն՝ թերթում արծարծվում էին Օսմանյան կայսրությունում սահմանադրական միապետության ստեղծման հարցեր, որոնց լուծումը հանգեցնում էր եվրոպական պետությունների օրինակին: Թերթը պայքարում էր վաշխառության և բյուրոկրատական կամայականության, արտաքին պարտքերի քաղաքականության դեմ: Ազգային հարցում և՛ «Մուհբիրը», և՛ «Հյուրիեթը» քարոզում էին օսմանիզմի դոկտրինայի սկզբունքները՝ բոլոր թուրքահպատակների համար «միասնական հայրենիքի» գաղափարը և, ամենից առաջ, սահմանադրության հռչակման անհրաժեշտությունը, որը կնպաստեր ժողովուրդների միասնությանը[6]: Ընդ որում, թերթը բացահայտորեն դեմ էր ոչ մուսուլման ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին և քարոզում էր թուրքերի գերիշխանության գաղափարը:

Վտարանդության մեջ անցկացրած տարիները կարևոր դեր խաղացին նրանց գաղափարական և քաղաքական հայացքների կազմավորման մեջ: Այնտեղ «նոր օսմանները» ծանոթացան ֆրանսիական քաղաքական ու գեղարվեստական առաջադեմ գրականությանը, որտեղ քննադատվում էր միահեծանությունը և քարոզվում սահմանադրական միապետությունը:

XIX դ. 70-ական թվականներին Բ. Դուռը, իր քաղաքական հակառակորդներին սիրաշահելով հին ավանդույթի ոգով, «նոր օսմաններին» հնարավորություն տվեց վերադառնալ հայրենիք: 1871–1872 թթ. որոշ գործիչներ վերադարձան Ստամբուլ, որտեղ 1872 թ. Ն. Քեմալը սկսեց հրատարակել «Իբրեթ» (Խրատ) թերթը: 1872-ին Միդհատ փաշայի՝ մեծ վեզիրի պաշտոնը զբաղեցնելու կարճ ժամանակաշրջանում այս թերթը դարձավ սահմանադրականների հայացքների քարոզիչը: Մեղրամիսը, սակայն, կարճ տևեց: Օսմանյան պահպանողականության բացահայտ անհանդուրժողականության պայմաններում Միդհատը պաշտոնանկ արվեց, իսկ թերթը փակվեց 1873 թ.: Նամըք Քեմալը վտարվեց Կիպրոս: Նրա հետ երկրից վտարվեցին նաև մի շարք լրագրողներ և հրապարակախոսներ, որոնք «նոր օսմանների» կողմնակիցներն էին: Այս ամենը հիմքեր նախապատրաստեց սահմանադրական պայքարի համար: Ըստ «նոր օսմանների» քա-

---

[5] Ю. А. П е т р о с я н. Турецкая публицистика эпохи реформ в Османской империи (конец XVIII –начало XX в.). М., 1985, с. 50.

[6] *Նույն տեղում, էջ 54:*

դաքական ծրագրի[7], սահմանադրական միապետության հռչակումը կարևոր նախադրյալ պիտի լիներ երկրի տնտեսական և քաղաքակրթական առաջընթացի համար: Նամըք Քեմալի կարծիքով, կառավարության գործողությունները կարելի էր հսկել միայն սահմանադրական կառավարման միջոցով, և կարևորագույն քաղաքական հարցերը պիտի լուծեր պառլամենտը, որն, իր հերթին, բաղկացած պիտի լիներ պատգամավորների պալատից և սենատից:

1876 թ. գարնանը Արևելյան ճգնաժամի սրացումը, որը կարող էր նպաստել եվրոպական տերությունների միջամտությանը Օսմանյան Թուրքիայի ներքին գործերին, բարենպաստ դեր խաղաց օսմանյան առաջին սահմանադրությանն ուղղված պայքարում:

Սահմանադրական բարեփոխումների կողմնակիցներին գլխավորեց նույն Միդհատ փաշան, որը սահմանադրության նախագծի հեղինակն էր: Դավադրություն կազմակերպելով սուլթան Աբդուլ Ազիզի դեմ՝ «նոր օսմանների» կողմնակիցները Միդհատ փաշայի գլխավորությամբ հույսեր էին փայփայում, որ նոր սուլթան Մուրադ V-ի շնորհիվ կհասնեն իրենց նպատակին՝ սահմանադրության հռչակմանը[8]: Միդհատ փաշայի նախագծում սուլթանը ճանաչվում է իսլամի պաշտպան: Բոլոր օսմանահպատակների համար նախագիծը նախատեսում էր իրավունքների և պարտականությունների հավասարություն՝ անկախ ազգությունից և դավանանքից, ունեցվածքի անձեռնմխելիություն, նաև խոսքի և մամուլի ազատություն[9]: Սակայն Միդհատ փաշայի նախագիծը չընդունվեց, քանի որ պահպանողականներն առարկում էին, որ «տգետ ժողովուրդը չի կարող օգտվել սահմանադրությամբ նախատեսված իրավունքներից»[10]: Նրանց համար հատկապես առարկելի էր օրենսդիր մարմիններում ոչ մուսուլմանների ընդգրկման մասին հարցը, քանի որ վերջիններս այդ պարագայում կարող էին կիրառել շարիաթին հակասող օրենքներ: Իշխող ավատակղերական վերնախավը «չէր ցանկանում զրկվել իր արտոնություններից և իրավունքներից»[11]:

Սակայն արտաքին քաղաքական իրավիճակը Միդհատ փաշայի հակառակորդներին ստիպեց զիջումների դիմել: 1876 թ. հունիսի 30-ին Սերբիան, իսկ հուլիսի 1-ին Չերնոգորիան պատերազմ հայտարարեցին Թուրքիային: Պատերազմի վտանգի առջև սահմանադրության հակառակորդները փորձեցին «մերձենալ» Միդհատի և նրա կողմնակիցների հետ[12]: Միդհատ փաշան մուսուլման-

---

[7] *«Նոր օսմանները» մշակեցին նաև բավական չափավոր ագրարային ծրագիր, որը նախատեսում էր վերացնել հարկերի կապալային համակարգը և սահմանափակել վաշխառությունը: Նրանք ձգտում էին կիրառել գյուղատնտեսության մեջ գիտության, մասնավորապես՝ եվրոպական գյուղատնտեսության նվաճումները: Նրանց քննադատության թիրախն էին արտաքին փոխառությունները, որոնք ավելի էին վատացնում երկրի՝ առանց այդ էլ ծանր տնտեսական վիճակը* (Ю. А. П е т р о с я н. “Новые османы”…, с. 51):

[8] М. А. Г а с р а т я н, С. Ф. О р е ш к о в а, Ю. А. П е т р о с я н. *Նշվ. աշխ., էջ 127:*

[9] И. Е. Ф а д е е в а. Мидхат-паша. Жизнь и деятельность. М., 1977, с. 78.

[10] *Նույն տեղում, էջ 79:*

[11] *Նույն տեղում:*

[12] *Սահմանադրության կողմնակիցները դարձան Մեհմեդ Ռյուշտյու փաշան և շեյխ ուլ-իսլամ Սեյֆէդդին էֆենդին: Վերջինս ճիշտ նույն «նոր օսմանների» ոգով փորձում էր ապացուցել, որ իսլամը չի հակասում սահմանադրական կառավարմանը (նույն տեղում, էջ 80):*

ներից և քրիստոնյաներից կազմված խառը ջոկատներ էր ուղարկում Սերբիա և Չերնոգորիա՝ ջանալով իրականում ցուցադրել հանուն «ընդհանուր հայրենիքի»՝ Օսմանյան կայսրության տարբեր ժողովուրդների շահերի «միասնությունը», որը սահմանադրության ելակետերից մեկն էր:

Սուլթան Մուրադ V-ի հիվանդությունը կամ նրա դեմ ուղղված՝ իշխանության ձգտող Աբդուլ Համիդի խոստումները գայթակղեցին թուրք սահմանադրականներին: Ստեղծված իրավիճակը դրդեց Միդհատ փաշային նոր հեղաշրջում կազմակերպելու: «Նոր օսմանները» և Միդհատը փաստորեն գահ բարձրացրին Աբդուլ Համիդին՝ նրա գահակալումից հետո սահմանադրություն ընդունելու պայմանով[13]: Սակայն «Աբդուլ Համիդը ընդամենը մտահոգված էր Միդհատ փաշայի և բարենորոգիչների դեմ իր դիրքերի ամրապնդմամբ… Երբ նա դարձավ սուլթան, նրա նախարարները շուտով գիտակցեցին, որ Աբդուլ Համիդը ատելությամբ է լցված կառավարման մեջ փոփոխություններ մտցնելու գաղափարների նկատմամբ»[14]:

1876 թ. հոկտեմբերին դեռևս իրադրությունը վերահսկող սահմանադրականների թելադրանքով ստեղծվեց սահմանադրության նախագծի մշակման հանձնաժողով, որի անդամներն էին նաև «նոր օսմանների» գաղափարախոսներ Նամըք Քեմալը և Զիյա բեյը: Կառավարական շրջաններում պայքարում էին սուլթանի իրավունքների հարցի շուրջ. ավատական-կղերական ռեակցիոն շրջանները սուլթանի իշխանության անձեռնմխելիության պահպանման կողմնակից էին:

Սահմանադրության նախագիծը նախատեսում էր երկպալատ խորհրդարան: Առաջարկվում էր նոր՝ վարչապետի պաշտոն, որին վերապահվում էր կառավարության ինքնուրույն կազմավորման իրավունքը: Սահմանադրությունը սահմանափակում էր սուլթանի ինքնիշխան իրավունքները, ուստի նա որոշեց վերանայել նախագիծը՝ ամեն կերպ ձգձգելով դրա ընդունման հարցը:

Արտաքին քաղաքական իրավիճակը՝ Արևելյան ճգնաժամի սրացումը (Սերբիայի և Չերնոգորիայի կարգավիճակի վերաբերյալ ռուսական կառավարության վերջնագիրը, նաև Բոսնիային և Հերցեգովինային վարչական ինքնավարություն տրամադրելու պահանջը) Աբդուլ Համիդին ստիպեցին սանկցիա տալ սահմանադրության կիրարկման վերաբերյալ: 1876 թ. դեկտեմբերի 23-ին հռչակվեց առաջին թուրքական սահմանադրությունը, որը նախատեսում էր անձի ազատություն, օրենքի առջև բոլոր օսմանահպատակների իրավահավասարություն՝ անկախ նրանց դավանանքից: Սահմանադրությունը բոլոր թուրքահպատակներին հայտարարում էր «օսմաններ», իսկ Օսմանյան կայսրությունը՝ միասնական ամբողջություն: Ակնհայտ էր, որ այս դրույթն ուղղվում էր ոչ մուսուլման ժողովուրդների ազատագրական պայքարի դեմ: 1876 թ. սահմանադրությունը նվազագույնս էր սահմանափակում սուլթանի իշխանությունը, սակայն հարկ է նշել, որ «բուրժուական ազատությունների հռչակումը և խորհրդարանական ռեժիմի հաստատումը նոր քայլ էին երկրի արևմտականացման ճա-

[13] И. Е. Ф а д е е в а, *Նշվ. աշխ., էջ 81:*
[14] E. P e a r s. Life of Abdul Hamid. New York, 1917, p. 48.

նապարհին: Մյուս կողմից, երկրում հաստատված սահմանադրական ռեժիմը չուներ «կենսականորեն» կարևոր հասարակական ու սոցիալական հիմքեր: Այս հանգամանքից էլ օգտվեց Աբդուլ-Համիդը, որը և հարվածեց սահմանադրության թիկունքին[15]*:*

Այսպիսով, ինչպես թանզիմաթի առաջնորդները, այնպես էլ «նոր օսմանները» պայքարում էին կայսրության ամբողջականության համար՝ պահանջելով պահպանել թուրքական գերիշխանությունը օսմանահպատակ հույների, հայերի, հրեաների, արաբների և այլ մուսուլման ժողովուրդների նկատմամբ: Այսինքն, ազգային հարցում նրանք հավատարիմ էին պանօսմանիզմի գաղափարին: Ըստ էության, միասնական օսմանյան ազգի գաղափարը հռչակել էր դեռևս Ֆուադ փաշան իր քաղաքական կտակում: Այս գաղափարը, ըստ «նոր օսմանների», պիտի խոչընդոտեր ազգային-ազատագրական շարժումները և ամրապնդեր կայսրության ամբողջականությունը: Իհարկե, բոլոր օսմանահպատակների համար քարոզելով միասնական, ընդհանուր հայրենիքի գաղափարը՝ նրանք պահպանում էին թուրքերի գերիշխանությունն «օսմանացված» ժողովուրդների նկատմամբ, որն արդեն բացառում էր ազգերի իրավահավասարությունը: Հենց այս գիտակցությամբ էր, որ խորհրդարանում նախագահող Ահմեդ Վեֆիկ փաշան ընդհատում էր ոչ մահմեդական պատգամավորներին՝ ասելով, որ նրանք «պատկերացում չունեն իրենց ասելիքի մասին և անհեթեթություններ են դուրս տալիս»[16]*:*

«Նոր օսմանների» պետության հայեցակարգը պարզորոշ տանում էր դեպի ազգերի ձուլում, այսինքն՝ ազգային հարցը նրանք լուծում էին ազգայինը վերացնելու ճանապարհով՝ չկան ազգեր, ուրեմն չկա նաև ազգային և կրոնական պայքար, որը քայքայում է երկրի հիմքերը և «դամոկլյան սրի» պես սպառնում երկրի ամբողջությանը: Առաջին հայացքից մարդասիրական, ժողովրդավարական, իրավահավասարության այս շղարշի տակ թաքնված էին ազգայնականության և պանիսլամիզմի հեռահար գաղափարները:

Պայքարելով երկրում տիրող բռնապետության և կամայականության դեմ, որոնք խանգարում էին կայսրության առաջընթացին և միաժամանակ խթանում նրա տարածքում ապրող ազգերի ընդվզումները, «նոր օսմանները» պնդում էին, որ բռնապետության և կամայականության չարիքը վերացնելու դեպքում օսմանահպատակ բոլոր ժողովուրդները կապրեն հաշտ ու համերաշխ: Իսկ սահմանադրական միապետության հաստատման հետ բոլոր ազգերը կստանան զարգացման և վերածննդի հնարավորություն՝ համախմբվելով և կազմելով

---

[15] *1877 թ. փետրվարին նա ձերբակալել տվեց Միդհատ փաշային, որին վտարեցին Օսմանյան կայսրությունից: «Թեև սահմանադրությունը ձևականորեն չէր լուծարվել, սակայն պատմության մռայլ պարադոքսը դարձավ այն փաստը, որ հենց սահմանադրության հռչակումից հետո Աբդուլ Համիդին հաջողվեց երկիրը վերածել ավատական միապետության վարչակարգի արյունոտ չարագործությունների ասպարեզի»* (М. А. Гасратян, С. Ф. Орешкова, Ю. А. Петросян. *Նշվ. աշխ., էջ 129*):

[16] E. Pears. *Նշվ. աշխ., էջ 51: Մի անգամ նա լռեցրեց պատգամավորներից մեկին՝ Ռոբերտ քոլեջի նախագահ դոկտոր Վոշբրնին, «լռի՛ր, ավանակ»* (sus e'hek!) *արտահայտությամբ* (*նույն տեղում*)*:*

մի ամրակուռ միություն: Նրանք նախատեսում էին խորհրդարանում ընդգրկել բոլոր ազգերի ներկայացուցիչներին՝ դրանով կենսագործելով պանօսմանիզմի՝ իրենց կողմից մշակված ազգային հարցի վերաբերյալ դրույթները: Նրանց քաղաքական պլատֆորմը՝ պանօսմանիզմը, ուղղված էր ոչ միայն քրիստոնյա ազգերի ձուլմանը օսմանների հետ, այլև ո՛չ թուրքական ծագում ունեցող մուսուլման ժողովուրդների՝ լազերի, քրդերի, արաբների և այլնի ձուլմանը՝ անկախ նրանց ցեղային և կրոնական պատկանելությունից: Նամըք Քեմալի կարծիքով իսլամը հնարավորություն էր տալիս այս գաղափարն իրականացնել հօգուտ կայսրության հզորացման[17]: Այսպես ձևավորվեց թուրքական ազգայնականությունը, որը հետագայում վերաճեց պանթուրքիզմի հետադիմական գաղափարախոսության:

Կարելի է ասել, որ 1876 թ. դեկտեմբերի 23-ին հռչակված սահմանադրությունը քաղաքական կարևորագույն փաստաթուղթ էր Թուրքիայի նոր պատմության մեջ, քանի որ՝ «այդ պահին կատարվեց մի նշանավոր գործողություն, որը փոխեց 600 տարի գոյատևած կառավարման ձևը. հռչակվեց սահմանադրություն, որով Նորին մեծություն սուլթանը երջանկություն պարգևեց կայսրությանը»[18]: Չնայած սահմանադրությունը նվազագույնս էր սահմանափակում սուլթանի իշխանությունը, այդուհանդերձ, այն առաջադեմ երևույթ էր Օսմանյան Թուրքիայի պատմության մեջ, քանզի անձի ազատության օրենքի առջև բոլոր թուրքահպատակների՝ անկախ նրանց դավանանքից, հավասարության հռչակումը, սեփականության անձեռնմխելիության երաշխիքը, վարկերի հավասարաչափ բաշխումը, մամուլի ազատության հռչակումը, բոլորի համար պարտադիր սկզբնական կրթության գաղափարի հաստատումը՝ թուրքերենի իմացության պայմանով, կայսրության բոլոր հպատակներին պետական պաշտոնների երաշխավորումը և, ամենակարևորը՝ խորհրդարանի ստեղծումը, իրագործվում էր ավատական-սուլթանական ռեժիմի պայմաններում: Հռչակելով իր ժամանակի համար բավական առաջադեմ գաղափարներ, Օսմանյան Թուրքիան, սակայն, դեռևս շատ հեռու էր իրական սահմանադրական սկզբունքների կենսագործումից. սահմանադրության մի շարք կետերում արտացոլված էր ճնշված ժողովուրդների նկատմամբ թուրքերի գերիշխանության հավերժացման ձգտումը, որ բխում էր Օսմանյան կայսրության ամբողջականության և բոլոր հպատակներին՝ դավանանքից անկախ, «օսմաններ» հայտարարելու գաղափարից: «Նոր օսմանները» փորձում էին թուրքական հողի վրա պատվաստել եվրոպական առաջադեմ մտածողների գաղափարները՝ «սինթեզելով ավանդական մուսուլմանական և բուրժուական ազատական գաղափարները և տեսությունները պետական հասարակական կառուցվածքի ոլորտում»[19]: Աբդուլ Համիդը իր հպատակներին նվիրեց մի սահմանադրություն, որը պիտի «հաստատեր Թուրքիայում ազատություն, ճշմարտություն, հավասարություն», այսինքն՝ քաղաքակրթության գերակայություն: Քանի որ Եվրոպան արդեն չէր հավատում Թուրքիայի խոստում-

---

[17] Ю. А. П е т р о с я н. “Новые османы”…, с. 58.

[18] История дипломатии, т. II, М., 1963, с. 107.

[19] Ю. А. П е т р о с я н. Младотурецкое движение…, с. 104.

ներին, ապա արտաքին գործերի նախարար Սավֆեթ փաշան խնդրեց թուրք դեսպաններին՝ սահմանադրության հռչակումից հետո տերություններին հավաստիացնել, որ խոսքին կհաջորդի գործը[20]: «Մենք կարող ենք հպարտությամբ հայտարարել, որ սահմանադրությունը երաշխավորում է այն շահերը (քրիստոնյաների շահերը), որոնց պահպանումը իր վրա է վերցրել Եվրոպան»[21]: Սակայն Եվրոպան չանսաց դիվանագիտական այս ոսկեզօծ ելույթներին: Ֆրանսիական լուսավորիչների՝ պետության և իրավունքի տեսության գաղափարները ներմուծելով Թուրքիա՝ «նոր օսմանները» անհրաժեշտ էին համարում դրանք համաձայնեցնել իսլամի նորմերի հետ, այսինքն՝ նրանց կողմից քարոզվող լիբերալ ռեֆորմիզմը պիտի համատեղելի լիներ շարիաթի և ղուրանի սկզբունքներին ու նորմերին: Ելնելով դրանից՝ Նամըք Քեմալը հարկ էր համարում «միավորել Արևելքի դավանական սկզբունքները Արևմուտքի գիտական նվաճումների հետ»[22]:

«Նոր օսմանները» սոցիալական, քաղաքական և մշակութային առաջընթացի հիմնական լծակն էին համարում լուսավորությունը՝ Եվրոպայում կուտակված գիտելիքներով նպաստել և խթանել Օսմանյան կայսրության տնտեսական առաջընթացը: Այս պարագայում նրանք չափազանց կարևորում էին նաև երկրի բնակչության մուսուլմանական-թուրքական մասի կրթության և լուսավորության հարցը, քանզի կայսրության քրիստոնյա ժողովուրդները, հատկապես՝ բուլղարները, հայերը և հույները՝ անկախ քաղաքական և տնտեսական ճնշումից, ունեին ավելի բարձր կրթական մակարդակ, քան մուսուլմանները: Զիյա բեյի և Նամըք Քեմալի կարծիքով, ժողովրդական կրթության և լուսավորության գործի թույլ հիմքերը խոչընդոտում էին կայսրության տնտեսական և մշակութային առաջընթացը: Իսկ վերջինս, ըստ «նոր օսմանների» տեսակետի, կիրագործվեր միայն երկրում սահմանադրական միապետություն հաստատելու շնորհիվ:

Սակայն «արևմտականացված» լինելով կրթության և լուսավորության հարցերում՝ նրանք հետադեմ և պահպանողական էին ազգային հարցում: «Նոր օսմանների» ղեկավարները պահանջում էին պահպանել և «փայփայել» թուրքական գերիշխանությունը սլավոնների, հույների, հայերի, արաբների, քրդերի և կայսրության այլ ժողովուրդների նկատմամբ: Նրանք պայքարում էին հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ, որոնք կարող էին սասանել կայսրության ամբողջականությունը: Ինչպես նշում է Յու. Պետրոսյանը, «Նրանք (»նոր օսմանները» – Հ.Գ.) փորձում էին նույնիսկ տեսականորեն հիմնավորել ազգային-ազատագրական շարժումների պատմականորեն ոչ նպատակահարմար լինելը»[23]: Եվ «օսմանլըլըք»-ի (օսմանցիության) գաղափարական էլակետը հենց այդ դրույթն էր՝ կայսրության բոլոր ժողովուրդների հավասարությունը և միասնությունը նախատեսվում էր «ընդհանուր հայրենիքի», այսինքն՝ Օսման-

---

[20] Г. А. Д и е в. Армянский вопрос в Турции (из переписки со стамбульским публицистом). М., 1893, с. 67.

[21] *Նույն տեղում, էջ 68:*

[22] Ю. А. П е т р о с я н. Младотурецкое движение…, с. 107.

[23] *Նույն տեղում, էջ 126:*

յան կայսրության սահմաններում: Օսմանյան սահմանադրությունը ի սկզբանե ուղղված էր խոչընդոտելու հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումը, նաև կայսրության տնտեսական և քաղաքական վերածննդի «պատրանքներ սերմանելու» և նպաստելու օսմանցիների լուծը կրող ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ապակողմնորոշմանը[24]: Եվ հենց այս հանգամանքով էր պայմանավորված «նոր օսմանների» և նրանց սահմանադրության նկատմամբ արևմտահայության դիրքորոշումը արտահայտող հայ հասարակական մտքի վերաբերմունքը:

Ելնելով այն բանից, որ «նոր օսմանների» հայեցակարգի հիմքում ընկած էր «պանօսմանիզմի» հեռահար և վտանգավոր գաղափարախոսությունը, հայ հասարակական միտքը բացասաբար էր տրամադրված թուրքական սահմանադրության նկատմամբ: «Նոր օսմանների» գաղափարները չէին կարող դրական արձագանք գտնել արևմտահայության շրջաններում, քանզի նրանք քարոզում էին իսլամի բացառիկությունը, և ներմուծելով եվրոպական լուսավորիչների սոցիալ-իրավական և փիլիսոփայական առաջադեմ հայեցակարգը՝ այն ենթարկում էին շարիաթի և դուրանի սկզբունքներին: Այս կարծիքին էին և՛ Նամըք Քեմալը, և՛ Ալի Սուավին: Նամըք Քեմալը, օրինակ, պնդում էր, որ սահմանադրությունը ամբողջովին պետք է հիմնվի կրոնի վրա[25], որը արդեն հակասում էր սահմանադրության մեջ հայտարարված ազատություններին և խոչընդոտում հպատակ այլահավատ ժողովուրդների ազգային ինքնորոշմանը:

Դատապարտելով հպատակ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ազատագրական շարժումը՝ սահմանադրականները դրանով կասեցնում էին սուլթանական ռեժիմի դեմ ըմբոստանալու հնարավորությունները: Հայ մամուլը չէր կարող անտարբեր մնալ թուրքական սահմանադրության շուրջ ծավալված կարծիքների նկատմամբ: «Նոր օսմանները» առարկում էին մասնակի բարեփոխումներին և առաջ էին քաշում սահմանադրական միապետության անցնելու հարցը՝ որպես Արևելյան հարցի լուծման հուսալի երաշխիք»[26], որ և արտացոլվեց «Մահմեդական հայրենասերների հայտարարության» մեջ: Այս փաստաթղթին արձագանքեց «Մասիս» թերթը՝ նշելով, որ այն գրված է «միայն իսլամաց տեսակետով և քրիստոնեից պաշտպանության վրա հայտնապես դժգոհությամբ կխոսի»[27]: «Մասիսը» առարկում էր «նոր օսմանների» գաղափարախոսության այն դրույթին, ըստ որի, սահմանադրության հիմքում պիտի ընկած լինեն շարիաթի սկզբունքները, քանի որ վերջինս ընդունում է մուսուլմանների գերազանցությունը քրիստոնյաների նկատմամբ[28]: Թերթը դժգոհություն է հայտնել նաև հիշյալ հայտարարության մեջ տեղ գտած միակողմանի տեսակետի վերաբերյալ, ըստ որի, այլահավատ ժողովուրդների ծանր կացության պատճառները

---

[24] *Ա. Ա. Խ ա ռ ա տ յ ա ն. 1876 թ. Օսմանյան սահմանադրությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ (1870-ական թթ.).– (ՊԲՀ», 1981, № 4, էջ 110-111):*

[25] Ю. А. П е т р о с я н. Младотурецкое движение…, с. 107-109.

[26] Ю. А. П е т р о с я н. “Новые османы”…, с. 82.

[27] *Մասիս, 1876, № 1833:*

[28] *Նույն տեղում:*

բացատրվում էին միայն կառավարման թերություններով և «բռնակալ միապետներով»:

Մինչդեռ «Մասիսը» ընդգծում էր, որ «Հայտարարության» մեջ պիտի արծարծվեր նաև սահմանադրական կառավարությունում քրիստոնյաների հավասար ու արդարացի մասնակցության հարցը, նշելով, որ, համենայն դեպս, «Իսլամ հայրենասերք այս կետը բացատրած չեն»[29]: Թերթը նկատում էր նաև, որ սահմանադրության գործադրումը ինքնին դրական նշանակություն ունի Օսմանյան կայսրության համար, քանի որ կաջակցի «հասարակաց իշխանությանց իմաստուն հավասարակշռության մը» և վերջ կդնի ծայրահեղության դրսևորումներին[30]:

Միանշանակ չէր նաև արևմտահայ պահպանողական և լիբերալ հոսանքների դիրքորոշումը «նոր օսմանների» և սահմանադրության նկատմամբ: Վերջիններիս համար անընդունելի էին «նոր օսմանների» գաղափարախոսության հետադիմական սկզբունքները մահմեդական կրոնի, նաև թուրքերենի գերազանցությունը այլ կրոնների և լեզուների նկատմամբ: Դրանով էր բացատրվում լիբերալ և պահպանողական հոսանքների «սպասողական դիրքը» սահմանադրության հարցում: Հարկ է նշել, որ լիբերալները հակված էին դրականորեն գնահատել սահմանադրության կիրարկման նշանակությունը Օսմանյան կայսրության համար. «Թուրքիա ամեն երկրե ավելի կարոտ է հասարակաց իշխանությանց իմաստուն հավասարակշռության մը, որպեսզի վնասակար և աղետաբեր ծայրահեղությանց առաջը կարենա առնվիլ»[31]: Արևմտահայ ազատամիտ գործիչ Գր. Օտյանը գտնում էր, որ թուրքական սահմանադրությունը կարելի էր կիրարկել Եվրոպայի, մասնավորապես՝ Անգլիայի աջակցությամբ: «Բայց այն անվստահությունն, որ ընդհանրապես տածում էին եվրոպացիք թուրք պետական անձերի բարենորոգչական ձգտումների անկեղծության մասին... ի դերև հանեց կատարված բոլոր ջանքերն և այս անհաջողության առաջին զոհերն եղան Թուրքիայի անկեղծ սահմանադրականները՝ Միդհատ, ապա և Օտյան...»[32]:

Արևմտահայ լիբերալ և պահպանողական հոսանքները սահմանադրության հետ էին կապում սուլթանի բռնապետության լուծարումը և ժողովուրդների հավասարության սկզբունքի հաստատումը անկախ կրոնից: Մինչդեռ Ռաֆֆին և «Մշակի» խմբագիր Գ. Արծրունին ժխտում էին բարեփոխումների զարգացումը

---

[29] *Նույն տեղում:*

[30] *Նույն տեղում, № 1835:*

[31] *Նույն տեղում:*

[32] *Ս ա ր ո ւ խ ա ն. Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910). հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 163: Սահմանադրության հրատարակումից հետո Միդհատի խորհրդակից Գր. Օտյանը, որն այդ ժամանակ «Հասարակաց շինությունների մինիստրի օգնական էր» (նույն տեղում, էջ 164), Միդհատի հանձնարարությամբ մեկնեց Լոնդոն, որպեսզի համոզի Բիկոնսֆիլդին աջակցել օսմանյան սահմանադրության եվրոպական երաշխավորությանը: Իհարկե, Օտյանը «համոզված չէր, թե նոր հրատարակված սահմանադրությունը հաստատուն կռվանների վրա է դրված» (նույն տեղում): Բայց և այնպես առաջարկում էր, որ «սուլթանի նորերս հաստատած Սահմանադրությունն այնպիսի մի ձևի տակ հաղորդվի պետություններին, որ* նրա գործադրությունը *միջազգային պարտականություն դառնա Բ. Դռան և պետությունների մեջ» (նույն տեղում, էջ 165):*

Օսմանյան կայսրությունում՝ ապավինելով միայն ազատագրական պայքարին: Ըստ Ռաֆֆու, բարեփոխումները հնարավոր է իրականացնել միայն մի ճանապարհով՝ տնտեսական ու սոցիալական վերընթացի միջոցով. «Որքան էլ աշխատեր, որքան էլ ճգներ Բ. Դուռը, և որքան էլ հաճախ իր ֆիրմաններով ազատ իրավունք և արդարություն տեղար ժողովրդի վրա, բոլորն անօգուտ է: Որովհետև մենք համոզված ենք, թե վերևից միայն հրաշքներ կարող են գործվել, բայց մի երկրի բարեկարգությունը պետք է սկսվի արմատից»[33]: Դրան հակառակ, Ծերենցը մերժում էր Ռաֆֆու և Արծրունու տեսակետը՝ ապավինելով լոկ բարենորոգչական փոփոխությունների զորությանը: Ծերենցի հետ բանավիճում էր Մ. Մամուրյանը, որին օսմանյան սահմանադրությունը ամենևին վստահություն չէր ներշնչում գործունակության տեսակետից[34]: Օսմանյան սահմանադրության նկատմամբ խիստ բացասական դիրքորոշում ցուցաբերեց նաև ականավոր գրող Հ. Պարոնյանը՝ գտնելով, որ այն ի զորու չէ թեթևացնելու հպատակ ժողովուրդների ծայրահեղ անմխիթար կացությունը, մասնավորապես հարստահարվող, կեղեքվող հայերի սոցիալ-իրավական վիճակը: Պարոնյանը լուրջ փաստարկ չէր համարում սահմանադրությունը՝ երկիրը բարեկարգելու գործում, մինչդեռ թուրք իշխանությունները ջանում էին այն ներկայացնել որպես «բարեկարգությանց երաշխավորություն». «Եթե կուզեն սահմանադրություն մ՛ալ կը հրատարակենք, որովհետև, ինչպես ըսինք, սահմանադրության հրապարակելե ուրիշ բան չենք կրնար ընել մենք»[35]: «Հայ, թուրք, պուլղար, հրեա և հույն միաբերան կը՛ սկսինք երկրիս շահերը պաշտպանել և հռչակել աշխարհի թե՝ մենք օսմանքս սահմանադրություն ունինք»[36]: Փաստորեն, Պարոնյանը թափանցում էր սահմանադրության ստեղծման քաղաքական շարժառիթների մեջ՝ իրատեսական գնահատական տալով դրանց:

Հ. Պարոնյանին «չէր համոզում» սահմանադրական առաջընթացի հեռանկարը համատարած իրավազրկության և հարատև հարստահարությունների պայմաններում. «Ինքզինքնիս մեղադրենք, որ սահմանադրություն ունինք և դարձյալ չկրցինք քրդերու բարբարոսութենեն խալսիլ»[37]:

Օսմանյան սահմանադրությունը մերժում էր նաև Գր. Արծրունին: Նկատելով, որ յուրաքանչյուր սահմանադրության հիմքում պիտի ընկած լինի իրավահավասարության սկզբունքը, Արծրունին եզրակացնում է, որ այդ կարևոր գաղափարը Օսմանյան կայսրությունում լիովին բացակայում է «ի վնաս» այլա-

---

[33] Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու. հ. 10, Երևան, 1991, էջ 432: Ռաֆֆու և Արծրունու տեսակետը չէր բաժանում Ծերենցը, որը նախընտրում էր զարգացման այլ ուղի՝ բարեփոխումների ուղին (Մ. Գ. Ն ե ր ս ի ս յ ա ն. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955, էջ 269-270): Սակայն Ծերենցի կարծիքը անընդունելի էր Մ. Մամուրյանի համար, որը անվստահությամբ էր վերաբերվում օսմանյան սահմանադրության գործունակությանը («Արևելյան մամուլ», 1876, -10, էջ 349): Այդ իսկ պատճառով էլ նրա վերաբերմունքը 1876 թ. հռչակված սահմանադրության հանդեպ բավական «զուսպ» էր:

[34] «Արևելյան մամուլ», 1876, №10, էջ 349:

[35] Հ. Պ ա ր ո ն յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1965, էջ 204:

[36] Նույն տեղում:

[37] Նույն տեղում, էջ 147:

հավատ ժողովուրդների: Կայսրության կառավարումը սահմանադրությունը իրագործում էր շարիաթի դրույթներով, որոնցով պայմանավորվում էին հպատակների փոխհարաբերությունները մեկ կրոնի գերազանցությամբ, որը ժխտում էր սահմանադրական ազատության սկզբունքը[38]: Այս ամենը Արծրունուն հանգեցնում է այն մտքին, որ օսմանյան սահմանադրությունը արհեստական և պարտադրված իրավական ակտ է, որը բացառում է և՛ կրոնի, և՛ խղճի ազատությունը: Մերժելով օսմանիզմի դոկտրինան՝ որպես այլահավատ ազգություններին թուրքերի հետ միաձուլելու միջոց, Արծրունին եզրակացնում է, որ «նոր թուրքերը», և, ամենից առաջ, Միդհատ փաշան, ավելի վտանգավոր են Բ. Դռան քրիստոնյաների համար, քան «թե հին թուրքերը»[39]:

«Նոր օսմանները» Սահմանադրությունը դիտում էին որպես քաղաքական ծրագրված նպատակ, իսկ սուլթանը այն ընկալում էր որպես դիվանագիտական միջոց, որով նա ձգտում էր, մինչև իր ինքնակալության ամրապնդումը, ստանալ թուրք սահմանադրականների բարեհաճությունն ու աջակցությունը գոնե ժամանակավորապես: Հիրավի, 1878 թ. նա ցրեց օսմանյան խորհրդարանը (ունեցել է երկու նստաշրջան) և հաշվեհարդար տեսավ սահմանադրականների հետ:

Արտաքին քաղաքականության հարցերում «նոր օսմանները» ունեին անգլիական կողմնորոշում, քանի որ «Արևելյան հարցում» Անգլիան անհրաժեշտ էր համարում պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը: Իսկ պահպանել Օսմանյան կայսրության «ստատուս-քվոն»՝ նշանակում էր «հավերժացնել» օսմանահպատակ քրիստոնյաների ճնշումը և հարստահարությունները: Անգլիան մտահոգված էր ոչ թե Օսմանյան Թուրքիայի ինքնուրույնությունը պահպանելու, այլ Ռուսաստանի առաջխաղացումը դեպի «տաք ջրեր» կանխելու խնդրով: Բացի այդ, Անգլիան նվաճողական պլաններ ուներ Թուրքիայի նկատմամբ, ինչի ապացույցը եղավ Կիպրոսի գավթումը 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: «Նոր օսմանները» թշնամաբար էին տրամադրված Ռուսաստանի հանդեպ, քանի որ Ռուսաստանը, նախ, Թուրքիայի նկատմամբ ուներ տարածքային դարավոր պահանջներ և ապա՝ աջակցում էր թուրքական սուլթանի հպատակ սլավոնների՝ Բալկաններում ծավալած ազատագրական պայքարին: «Ռուսաստանը հովանավորում էր սլավոնական ազգային շարժմանը. այդ քաղաքականության իրական հիմքում ընկած էր այն, որ ռուս կառավարությունը սլավոններին դիտում էր իբրև Օսմանյան կայսրության և Ավստրո-Հունգարիայի հակառակորդներ: Այդ երկու բազմազգ պետությունները ստրկացնում էին հարավային սլավոններին, սակայն միևնույն ժամանակ հենց նրանք էին Ռուսաստանի հակառակորդները՝ Մերձավոր Արևելքում և հատկապես Բալկանյան թերակղզում գերիշխանության համար մղվող պայքարում: Ռուսական ազդեցությունը Բալկաններում սուլթանի իշխանության դեմ հիմնական սպառնալիքն էր»[40]: Ասվածին միայն մասամբ կարելի է համաձայնվել, որովհետև այստեղ Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը քո-

---

[38] *«Մշակ », 1876, № 50:*

[39] *«Մշակ », 1877, № 53:*

[40] История дипломатии, т. II, с. 84.

դարկված է սլավոններին «ազատագրողի» ծխածածկույթով: Մերձավոր Արևելքում ևս Ռուսաստանին հետաքրքրում էր նեղուցների հարցը: Եթե Օսմանյան կայսրությունը քայքայվեր, «նեղուցները կզրկվեին իրենց դարավոր տիրակալից՝ Թուրքիայից»[41], որն արդեն վտանգ չէր ներկայացնի Ռուսաստանի համար: Իսկ այդ պարագայում նեղուցների նոր տիրակալը կարող էր դառնալ Անգլիան, որը ձգտում էր վերահսկել Օսմանյան կայսրության տարածքով անցնող՝ Եվրոպայից դեպի Հնդկաստան տանող առևտրական ուղիները: Անգլիայի գլխավոր հակառակորդը Ռուսաստանն էր: Ե՛վ Անգլիան, և՛ Ռուսաստանը ձգտում էին հաստատվել նեղուցներում, սակայն այդ բաղձալի նպատակին կարելի էր հասնել երկու ճանապարհով՝ կա՛մ գրավել նեղուցները, կա՛մ գործարքի մեջ մտնել սուլթանի հետ: Քարոզելով պանօսմանիզմի սկզբունքները, «նոր օսմանները» փորձում էին պայքարել եվրոպական պետությունների դեմ, որոնց ազդեցությունը Արևելքում, մասնավորապես Թուրքիայում, աճում էր օրեցօր: Նրանց նպատակն էր երկիրը տեսնել անկախ և ինքնուրույն, որպեսզի վերջ տրվեր օտարերկրյա միջամտությանը Թուրքիայի ներքին գործերին: Ահա թե ինչու նրանք շտապում էին հռչակել օսմանյան սահմանադրությունը, որը, նրանց կարծիքով, հիմքեր կստեղծեր երկրի ինքնուրույնության համար և հնարավորություն կընձեռեր եվրոպական պետությունների հետ հաստատելու իրավահավասար հարաբերություններ:

«Նոր օսմանների» հասարակական-քաղաքական հայացքները պայմանավորված էին թե՛ պատմական, թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական բարդ իրավիճակով: Այս պայմաններում ձևավորվեց թուրքական բուրժուական լիբերալիզմը, որը տագնապ առաջացնելով թուրքական կառավարական շրջաններում, նպաստում էր «նոր օսմանների» հայացքների տարածմանը օսմանյան մտավորականության շերտերում:

ПОЛОЖЕНИЕ ЗАПАДНЫХ АРМЯН И АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ В КОНТЕКСТЕ ОСМАНСКОГО РЕФОРМАТОРСКОГО ДВИЖЕНИЯ (70-е годы XIX в.)

ГЕВОРК АРУТЮНЯН

Р е з ю м е

В 60-70-х годах XIX в. Турция была отсталой аграрной страной. Тяжелому экономическому положению Османской империи соответствовала создавшаяся в стране политическая ситуация. Крымская война усугубила социально-экономический кризис, финансовая зависимость Турции от европейского капитала грозила колонизацией страны. Во имя спасения империи предлагались различные, взаимоисключающие решения. Турецкая ин-

[41] *Նույն տեղում:*

теллигенция, движимая идеей независимости империи, возлагала надежду на культурно-экономическое развитие страны. Выразителем этих чаяний и стало движение “новых османов”, сыгравшее огромную роль в борьбе за турецкую конституцию, автором которой был Мидхат-паша, возглавивший конституционное движение, вызвавшее в стране неоднозначное отношение. Однако обострение Восточного кризиса заставило провозгласить в 1876 г. конституцию, согласно которой все турецкоподданные объявлялись османами, а Османская империя – единой для всех родиной. Передовые армянские общественные деятели (Г. Арцруни, Раффи, А. Паронян) выступали с резкой критикой османской конституции, чреватой для армян новой волной национального и правового порабощения.

CONDITION OF THE WESTERN ARMENIANS AND ARMENIAN SOCIAL OPINION IN THE CONTEXT OF THE OTTOMAN REFORMATIVE MOVEMENT
(The 70s of the 19th cent.)

GEORGE HARUTYUNYAN

S u m m a r y

In the 60s-70s of the 19th c. Turkey was a law-developed agricultural country. The hard economic condition of the Ottoman Empire corresponded to the political situation of the state. The Crimean war worsened the social – economic crisis, and financial dependence of the European capital threated colonization of the state. The Turkish intellectuals hoped for cultural-economic development of the Ottoman Empire. “The new Ottoman” movement reflected expectations of the Turkish intellectuals and played a great role in the struggle for Turkish constitution, the author of which was Midhat pasha. The sharpening of the Eastern question made proclaim the constitution in 1876. Advanced Armenian social workers (G. Artsruni, Raffi, H. Paronyan) criticized the Ottoman constitution, which would give rise to a new wave of national and rightful enslavement of the Armenian people.